

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՈՑ ՈՒՍՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Լոնդոնի University College-ի պրոֆեսոր պ. Գ. Շոտլանդի մեզ ուղղած մի նամակին քաղում ենք հետևեալը:

Առ ալժմ ես կարող եմ հաղորդել ձեզ մահը պրոֆեսոր Պ. Ա. դը Լազարդի, Գեոտտինդենի համալսարանից, իմ «Հայկաբանութիւնը Եւրոպայում» (Etudes armenienes en Europe, որ թարգմանուում է l'Arménie թերթից «Մուրճ» ամսագրում) արդէն պարունակում է մի բաւականին լիակատար լօղած ալս արեւելագէտ գիտնականի մասին. ալլ լօղածը՝ հէնց ինքն է վեր տտուել (cet article a été revu par lui même):

Ինչ վերաբերում է իմ անձնական պարապմունքներին, ես ալս բռնաբէին պատրաստում եմ մի լօղած հալ պատմագիրների մասին Լոնդոնի «Royal Asiatic society» ընկերութեան ժուրնալի համար, և 13 մալսի ես պէտք է կարդամ Լոնդոնի Լեզապիտական ընկերութեան առաջ մի փշատակագիր ալն ակզի մասին որ բռնում է հայերէնը համեմատական լեզագիտութեան մէջ: Բայցի զրանից, ես ձեռնարկել եմ կազմել մի գրախօսութիւն (bibliographie) ալն բոլորի, ինչ գրած է օտար լեզուներով Հայաստանի մասին. ալլ աշխատութիւնը կը հրատարակի Վիեննայի Միլիթարեանների ձեռքով և կսկուի իմ «Հայկաբանութիւնը Եւրոպայում» ուսումնասիրութեան գերմաներերի թարգմանութիւնով (վերատարուած և ուղղած): Նոյն ալլ գործը լուս կը տնանի հաւերէն լեզուի:

Դուք պէտք է նկատած լինէք որ պ. Ոգիւտտ Կապրիէր, պրոֆեսորը Արեւելան կենդանի (!) լեզուների դպրոցում, ալժմ պատասխանում է Սերէտի և Միլիթար Դօչի Դատաստանագրի մասին: Պրն. Կարրիէրը ինձ գրել է որ նա մտաղիր է մօտ ապագայում հրատարակել Սերէտի ֆրանսերէն թարգմանութիւնը, որպէս նաև Աստղկի թարգմանութեան վերջը, որ սկսել էր Դիւլլորիէն: Պր. Կարրիէրը շատ գծարութիւններ է կրում ծանօթութիւններ անելու ալն կտորի վերաբերեալ ուր խօսում է Բաղրատունների մասին:

Եթէ խօսելու լինիք դը Լազարդի մահան մասին, դուք կարող էք աւելացնել որ նրանով անլալանում է վերջին լուրջ ներկայացուցիչը հայերէնի էրանական ծագման (l'origine éranienne de l'arménien) որով-

հետև միւս գիտնականները, որպէս հանդուցեալ Գերովրէ Պատկանեան և Վիեննայի պրոֆեսոր Ֆրիդրիխ Միւլլեր, որոնք մի ժամանակ նոյն թէո-
րիան էին պաշտպանում, ամենքը լեռով կանգնեցին պրոֆ. Հ. Հիւբշմանի
կողմը. մի խօսքով մեր ժամանակաշրջանը լուրջ լեզագէտները ըն-
դունում են հայերէնը որպէս առանձին լեզու (une langue à part) որը
էրանական չլինելով, աւելի մօտ է եւրոպական լեզուներին, մանաւանդ
սլավո-լիթուական (slavo-lithuanien) լեզուներին, Հայերէնի օրորոցը, ըստ
Միւլլերի պէտք է Թրակիան եղած լինի, ուստից հայկական ցեղերը (tribus)
պէտք է ցրած լինեն Փոքր-Ասիայում, որ Փրկլի թականից 6-րդ դար
առաջ գրաւել են Ուր-արտու (Ur-artu) կամ արարատեան թագաւորու-
թիւնը և նորա հարեան տեղերը:

Եւ միշտ դժարութեան մէջ եմ երբ ինձ հարկաւորում է ձեռք բերել
հայերէն մի գիրք օրինակ եւ վաղուց որոնում եմ Վարդ և Սոխակ (La Rose et
le Rosignol) պոէմակ բնագիրը, որ Թարմանած էր Լուսկան դը Ֆլորիալ-
նորա տպագրութիւնը եղել է Զմրւոյնիւրում 1880 թականին:

Շնորհաւորելով ձեր Նոր-Տարին և մաղթելով ձեր պատական ամ-
սագրի բարգաւաճումը, հաւատացե՛ք ինձ, թանկագին պարոն, անձնէ՛ր
Գ. Ա. Շառմպֆ: